Կանոնադրությունը կազմվել է՝
2017 թ հունիսի 21-ին
Բաղկացած է 10 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության
2017 թ. հունիսի 21-ի
արտահերթ հեռակա համագումարի որոշմամբ

«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության
նախագահ՝ Արսեն Ղազարյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«16» - 09- 2004թ.
Գրանցման համար 211.171.02913
Վկայական 03Ա066072
«16» - 09 -2004թ գրանցված կանոնադրության թիվ 002-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի գործակալության
կողմից
«28» 07 2017 թ.
ՀՀ իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի գործակալություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
2017 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Միություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) հասարակական կազմակերպություն է, որը իրենց շահերի ընդհանրության հիման վրա միավորում է արդյունաբերության, առևտրի, ֆինանսական, տրանսպորտի, շինարարության և այլ ոլորտներում գործարարությամբ զբաղվող ՀՀ քաղաքացիներին, օտարերկրյա պետությունների քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց:

1.2 Միությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի,ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին և այլ ՀՀ օրենքների ու իրավական ակտերի, միջազգային ու միջպետական պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Միության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը,անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:

1.4 Միության գործունեության ընթացքում կիրառվող լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը:

1.5 Միության անվանումն է՝

1.6 ա) հայերեն՝ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն, կրճատ՝ ՀԱԳՄ,

1.7 բ) ռուսերեն՝ "Союз промышленников и предпринимателей Армении" общественная организация, կրճատ՝ СППА,

1.8 գ) անգլերեն՝ ″Union of Manufacturers and Businessmen of Armenia″ public organization , կրճատ՝ UMBA :

1.9 Միությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ պետական գրանցման պահից, տնօրինում է իրեն պատկանող գույքը, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում, կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.10 Միությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

1.11 Միությունը պատասխանատու չէ պետության պարտավորությունների համար, իսկ պետությունը պատասխանատու չէ Միության պարտավորությունների համար:

1.12 Միությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:

1.13 Միությունը ունի իր անվանմամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով և Միության խորհրդանիշով դրոշմ և տիտղոսաթերթեր:

1.14 Միությունը ունի իր խորհրդանիշը, որն իրենից ներկայացնում է Արարատ լեռան ուրվագծով գրաֆիկական աշխատանք: Միությունն ունի իր դրոշը, որը մեկը երկուսի վրա սպիտակ կտոր է, որի մեջտեղի մասում պատկերված է Միության խորհրդանիշը: Խորհրդանիշի և դրոշի պատկերը ներկայացված է սույն Կանոնադրության մաս հանդիսացող հավելվածում:

1.15 Միության գտնվելու վայն է՝

1.16 ք.Երևան 0018, Տիգրան Մեծի 20/2, հեռ.՝ 010540715:

1.17 Միությունը գործում է ՀՀ ամբողջ տարածքում և արտերկրներում վերջիններիս օրենսդրության համաձայն:

2. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Միության գործունեության առարկան է՝

2.1.1 Հայաստանի Հանրապետությունում գործարարության ազատ ու արդյունավետ զարգացման համար պայմանների ստեղծմանը նպաստելը և նրանց գործունեությանը լայնորեն աջակցումն ու օժանդակումը,

2.1.2 պետության կողմից տարվող տնտեսական քաղաքականության, ընդունված օրենքների և որոշումների մասին գործարարներին մշտական տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև

գործարար շրջաններին հուզող հարցերի և պետության կողմից վարվող քաղաքականության վերաբերյալ նրանց կարծիքը պետական մարմիններին ներկայացնելը,

2.1.3 Միության անդամների տնտեսական, իրավական և օրինական այլ շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան պետություններում:

2.2 Միության նպատակներն են
նպաստել և աջակցել՝

2.2.1 շուկայական ենթակառուցվածքների ստեղծմանը, արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերում կառուցվածքային փոփոխությունների ու հետագա զարգացման ռազմավարության մշակմանը, արտադրության արդիականացմանը ու մրցունակ արտադրանքի թողարկմանը և այդ ճանապարհով միջազգային տնտեսական համակարգում Հայաստանի տնտեսական համակարգի ինտեգրմանը,

2.2.2 Հայաստանում նպատակային ներդրումային քաղաքականությանը,

2.2.3 ազգային և միջազգային համանման կազմակերպությունների, ինչպես նաև արտերկրի ու սփյուռքի գործարար շրջանների հետ սերտ կապերի հաստատմանը,

2.2.4 ազգային առանձնահատկությունները հաշվի առնող և գործարարության զարգացումը խրախուսող հարկային քաղաքականության ներդրմանը և կատարելագործմանը,

2.2.5 փոքր ու միջին բիզնեսի արդյունավետության զարգացմանը, դրանց գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը,

2.2.6 նորարարական գիտական, գիտատեխնիկական ծրագրերի մշակմանը և իրականացմանը,

2.2.7 տնտեսության զարգացման պահանջներին միտված կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը,

2.2.8 տնտեսավարող սուբյեկտների պատրաստի արտադրանքի իրացմանը և հումքի ձեռքբերմանը, շուկաների հետազոտությունների, ինչպես նաև ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպմանը.

2.2.9 ժողովրդավարական ու իրավական պետության ամրապնդմանը, շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացման վերաբերյալ քարոզչությանը,

2.2.10 տնտեսության զարգացման ծրագրերի և ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերող օրենսդրական ակտերի նախագծերի մշակմանն ու դրանց անկախ փորձաքննության աշխատանքներին,

2.2.11 քաղաքացիական իրավահարաբերություններից ծագած տնտեսական վեճերի քննարկմանն ու լուծմանը,

2.2.12 ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ տեղեկատվությունների և վերլուծությունների հրապարակմանը,

2.2.13 սկսնակ գործարարների մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացմանը, նրանց հայ վաճառականների ավանդույթների և, հատկապես, Ալեքսանդր Մանթաշյանցի կյանքի և գործունեության օրինակով ուղղորդելուն,

2.2.14 Հայաստանի և այլ պետությունների քաղաքացի հանդիսացող հայ գործարարների ազգանպաստ գործունեությունը հանրային լայն շերտերին ներկայացմանը և գործարարների նկատմամբ հասարակական դրական վերաբերմունքի ձևավորմանը.

2.2.15 Հայ գործարարների միջև անմիջական համագործակցության հնարավորությունների և տարաբնույթ էլեկտրոնային հարթակների ստեղծմանը, կայացմանը և զարգացմանը:

3. ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Միությունը իրավունք ունի՝

3.1.1 իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

3.1.2 բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,

3.1.3 ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից,

3.1.4 ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,

3.1.5 տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,

3.1.6 կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ,

3.1.7 օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

3.1.8 համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյակազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

3.1.9 իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից,

3.1.10 իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորների,

3.1.11 Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Միությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր: Արգելվում է կամավորներին ներգրավել Միության ձեռնարկատիրական գործունեության մեջ,

3.1.12 կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

3.2 Միությունը պարտավոր է՝

3.2.1 վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

3.2.2 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,

3.2.3 պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ ԱՆաշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,

3.2.4 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

3.2.5 Միության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Միության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, համագումարի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

3.2.6 Միության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ ԱՆաշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,

3.2.7 իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Միության նախագահի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

3.2.8 վարել ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում: Միության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ,

3.2.9 կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

4. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Միության անդամ կարող է լինել Հայաստանի և օտարերկրյա ցանկացած արդյունաբերող և գործարար, որն ընդունում է Միության կանոնադրությունը, ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և մուծում է անդամավճար: Միության անդամների ընդունելության և նրա կազմից դուրս գալու կարգը սահմանվում է Միության նախագահության կողմից:

4.2 Միության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

4.3 Միության անդամը իրավունք ունի՝

4.3.1 սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Միության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում,

4.3.2 մասնակցել Միության գործունեության հիմնական փաստաթղթերի մշակմանը,

4.3.3 Անվճար օգտվել Միության խորհրդատվական, տեղեկատվական և այլ ծառայություններից,

4.3.4 մասնակցել Միության կողմից անցկացվող միջոցառումներին,

4.3.5 ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ Միության աշխատանքների վերաբերյալ,

4.3.6 օգտվել Միության աջակցությունից, երբ պետական իշխանության և կառավարման այլ մարմիններում քննարկվում է իր հարցը,

4.3.7 անարգել դուրս գալ Միությունից,

4.3.8 ներկա լինել համագումարին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Միության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,

4.3.9 Միությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեներ՝ Միության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների , որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ , ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

4.3.10 Միության մարմինների որոշումները բողոքարկել Միության վերադաս մարմիններ՝ Միության նախագահության կողմից սահմանված կարգով,

4.3.11 դատական կարգով բողոքարկելու Միության մարմինների որոշումները՝ Հասարակական կազմակերպությունների մասին օրենքով սահմանված կարգով :

4.4 Միության անդամները պարտավորվում են՝

4.4.1 կատարել Միության կանոնադրության պահանջները, և կառավարման մարմինների որոշումները: Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

4.4.2 ժամանակին կատարել անդամության և նպատակային վճարումները,

4.4.3 առավելագույնս նպաստել Միության նպատակների իրականացմանը:

4.5 Միության անդամների համար երաշխավորվում է՝

4.5.1 Միության անդամ ընդունվելու մասին տեղեկատվության հրապարակայնությունը,

4.5.2 Միության տեղեկատվական բազայի տվյալներից օգտվելը,

4.5.3 բանկային և առևտրային գաղտնիքների պահպանումը:

4.6 Սույն կանոնադրության 4.4.1 և 4.4.3 ենթակետերում նշված պարտականությունները չկարատարած, ինչպես նաև Միության նպատակներին հակասող գործողություններ իրականացրած և ոչ հարիր վարք դրսևորած անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր ընդհուպ մինչև Միության անդամությունից հեռացնելը:

4.7 Միության նախագահության և խորհրդի անդամը՝ մեկ տարի, Միության անդամը՝ երկու տարի անընդմեջ անդամավճար չվճարելու դեպքում Միությանը տվյալ անդամի անդամակցությունը համարվում է կասեցված՝ մինչև Միության նախագահության որոշմամբ սահմանված ժամկետում չվճարված անդամավճարի ամբողջ գումարի վճարումը: Նշված ժամկետում անդամավճարի՝ չվճարված ամբողջ գումարի չվճարման դեպքում Միությանը տվյալ անդամի անդամակցությունը համարվում է դադարեցված: Սույն կետի համաձայն՝ Միության անդամակցությունը կորցրած անձը կարող է կրկին դառնալ Միության անդամ ոչ շուտ, քան անդամակցությունը կորցնելուց մեկ տարի հետո:

4.8 Միության յուրաքանչյուր անդամին տրվում է վկայական՝ Միության նախագահության կողմից սահմանված ձևին և հանձնման կարգին համաձայն:

5. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Միության կառավարման մարմիններն են Միության համագումարը, Միության նախագահը, Միության Խորհուրդը և Միության նախագահությունը: Վերստուգիչ գործառույթների համար ընտրվում է հանձնաժողով:

5.2 Միության կառավարման բարձրագույն մարմինը Միության համագումարն է, որն ունի Միության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք:

Միության համագումարը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

Հերթական համագումարը հրավիրվում է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անգամ՝ Միության Խորհրդի կողմից՝ անդամների համատեղ հավաքի ձևով:

5.3 Միության խորհրդի որոշմամբ կարող է նախատեսվել բոլոր անդամների կամ Միության խորհրդի կողմից սահմանված կարգով որոշված համամասնությամբ նրանցից ընտրված պատվիրակների մասնակցությունը համագումարին:

5.4 Միության համագումարի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ միության խորհրդի որոշմամբ այլ եղանակով՝ համագումարի անցկացման օրվանից առնվազն 14 աշխատանքային օր առաջ:

Միության անդամների առնվազն մեկ երրորդի կամ Միության վերստուգիչ հանձնաժողովի սույն կանոնադրությունից բխող պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, հրավիրվում է Միության արտահերթ համագումար, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական համագումարի հրավիրման համար նախատեսված եղանակով, սակայն ոչ ուշ, քան այդ համագումարի անցկացման օրվանից հինգ օր առաջ:

Արտահերթ կարգով այն կարող է հրավիրվել նաև Միության նախագահի կամ Միության Խորհրդի անդամների առնվազն 1/2-ի պահանջով՝ դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

Եթե Միության համագումարը անհնար է հրավիրել հինգերորդ տարին լրանալու օրը, ապա Միության մյուս կառավարման մարմինները պահպանում են իրենց լիազորությունները, բայց ոչ ավել քան վեց ամիս: Նշված ժամանակում Միության Խորհրդի կողմից համագումար չհրավիրելու դեպքում, կարող է համագումար հրավիրել Միության անդամների 1/3-ը համախմբող խումբը:

5.5 Միության համագումարն իրավազոր է, եթե հրավիրվել է կանոնադրությամբ սահմանված կարգով, և եթե մասնակիցների թիվն ավելի է բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից:

5.6 Միության համագումարի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են 5(հինգ) տարի:

5.7 Միության համագումարի բացառիկ իրավասությունն է՝

5.7.1 Միության կանոնադրության հաստատումը նրանում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

5.7.2 Միության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,

5.7.3 Հինգ տարի ժամկետով Միության նախագահի, Միության խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը, դրանց կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Միության Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի թվաքանակը որոշում է համագումարը,

5.7.4 Միության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,

5.7.5 Միության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից,

5.7.6 Միության կառուցվածքի հաստատումը,

5.7.7 Այլ իրավաբանական անձի ստեղծումը, այլ կազմակերպությունում Միության մասնակցության մասին որոշման ընդունումը,

5.7.8 Միության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և սույն կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը:

5.8 Միության բարձրագույն մարմինը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել Միության այլ մարմնի:

5.9 Համագումարի բացառիկ իրավասության հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել Միության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի կեսից ավելին,իսկ այլ հարցերի վերաբերյալ որոշումները՝ համագումարի մասնակիցների կեսից ավելին:

Եթե համագումարում քննարկվում է համագումարի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող,ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա համագումարի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

5.10 Միության գործունեության կամ Միության համագումարի ընթացքում օրենքով և Միության կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն (իրավիճակ) առաջանալու դեպքում հարցերը լուծվում են համագումարի որոշմամբ:

5.11 Համագումարի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը:

5.12 Համագումարի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Միության կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Միության կամ նրա անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է

դատական կարգով անվավեր ճանաչվել Միության կամ անդամի դիմումի հիման վրա:Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Միության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

5.13 Միության Խորհուրդը.

5.13.1 Միության նախագահի առաջարկությամբ ընտրում է Միության նախագահություն և փոխնախագահներ՝ նախագահության կազմից:
Միության փոխնախագահները, նախագահության անդամները ընտրվում և հետ են կանչվում Միության Խորհրդի նիստի մասնակիցների պարզ մեծամասնությամբ:
Միության փոխնախագահներին և նախագահության անդամներին հետ կանչելու մասին հարցը Միության Խորհրդի քննարկմանն է դրվում Միության նախագահի կամ Միության Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պահանջով,

5.13.2 որոշում է ընդունում համագումար հրավիրելու մասին: Անհրաժեշտության դեպքում սահմանում է համագումարի պատվիրակների ընտրության կարգը և ներկայացուցչական չափորոշիչները,

5.13.3 հաստատում է Միության գործունեության հնգամյա ծրագիրը,

5.13.4 վերստուգիչը հանձնաժողովի առաջարկությամբ քննարկում է ֆինանսատնտեսական գործունեության ընթացիկ ուսումնասիրման արդյունքները,

5.13.5 հիմնում է ՀՀ տարածքում և արտասահմանյան պետություններում ներկայացուցչություններ, մասնաճյուղեր: Միության նախագահի ներկայացմամբ նշանակում է մասնաճյուղերի նախագահներին և ներկայացուցչությունների ղեկավարներին,

5.13.6 Միության նախագահի հրաժարականի կամ նրա կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում յոթ օրվա ընթացքում հրավիրվում է Խորհրդի նիստ՝ Միության համագումար հրավիրելու մասին օրակարգով: Միության խորհրդի այդ նիստը հրավիրում և ղեկավարում է տարիքով ավագ փոխնախագահը,

5.13.7 հաստատում է Միության Խորհրդի և Միության նախագահության աշխատակարգերը,

5.13.8 պարբերաբար լսում է Միության նախագահի՝ իր և Միության նախագահության աշխատանքների մասին հաշվետվությունները,

5.13.9 սահմանում է Միության անդամների անդամավճարների և մուտքի վճարների չափը և մուծման կարգը,

5.13.10 հաստատում է Միության պարգևները,

5.13.11 որոշում է ընդունում իր լիազորությունների մի մասը Միության նախագահությանը տալու մասին,

5.13.12 ընտրում է Միության աուդիտն իրականացնող անձին, եթե օրենքի համաձայն Միությունը ենթակա է պարտադիր աուդիտի:

5.14 Խորհրդի նիստերը հրավիրվում և անց են կացվում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 1/2-ը:
Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Միության նախագահի ձայնը համարվում է որոշիչ:
Անհրաժեշտության դեպքերում Միության նախագահի որոշմամբ Խորհրդի իրավասությանը վերաբերվող ցանկացած հարց կարող է քվեարկվել հարցման միջոցով: Այդ դեպքում որոշումն ընդունում է խորհրդի ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

5.15 Միության Խորհուրդը Խորհրդի անդամի խորհրդի կազմից կամ Միությունից դուրս գալու դիմումի, պարտականությունների կատարման անհնարինության և սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում որոշում է կայացնում նրանց Խորհրդի կազմից հանելու մասին: Նման դեպքերում Խորհրդի քվորումը հաշվարկվում է Խորհրդի փաստացի անդամների թվաքանակից.

5.16 Խորհրդի նիստերին պարտադիր՝հրավիրվում են Միության հանձնաժողովների և մասնաճյուղերի նախագահները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.17 Միության նախագահությունը.

5.17.1 որոշում է անդամագրվելու և անդամությունից դուրս գալու հարցերը, Միության անդամների նկատմամբ, Միության նախագահի ներկայացմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:
Կարգապահական տույժի ենթարկված միության անդամը նախագահության որոշումը կարող է բողոքարկել Միության Խորհուրդ: Այդ հարցում Միության Խորհրդի որոշումը վերջնական է,

5.17.2 Միության նախագահի առաջարկով հաստատում և հեռացնում է Միության տնօրենին: Միության նախագահը մինչև Միության նախագահությունում տնօրենի հեռացման հարցի քննարկումը կարող է կասեցնել Միության տնօրենի գործունեությունը, որը չի կարող տևել երկու շաբաթից ավել,

5.17.3 հաստատում է միության տարեկան ծրագիրը,

5.17.4 ըստ անհրաժեշտության ձևավորում է Միության մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ,

5.17.5 Միության նախագահի առաջարկությամբ հաստատում և հեռացնում է Միության լրատվական միջոցների խմբագիրներին,

5.17.6 հիմնում է առևտրային կազմակերպություններ կամ որոշում է կայացնում մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին:

Հաստատում է Միության՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ուղղությունները:

5.17.7 իրականացնում է Միության Խորհրդի որոշմամբ իրեն վերապահված, ինչպես նաև ցանկացած այլ՝ Միության համագումարի, Միության նախագահի և Միության խորհրդի իրավասության մեջ չմտնող լիազորություններ:

5.18 Նախագահության նիստերը հրավիրվում և անց են կացվում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ:

5.19 Նախագահության որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, հավասարության դեպքում նախագահի ձայնը համարվում է վճռորոշ:

Նախագահության նիստերին կարող են մասնակցել Միության Խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Նախագահության նիստերի մասին պարտադիր իրազեկվում են նաև Խորհրդի անդամները:

Նախագահության նիստերին հրավիրվում են Միության հանձնաժողովների և մասնաճյուղերի նախագահները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.20 Նախագահության նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են նախագահության անդամների առնվազն 1/2-ը:

5.21 Միության նախագահը.

5.21.1 ապահովում է Համագումարի կամ Միության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը,

5.21.2 միանձնյա տնօրինում է Միության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Միության անունից,

5.21.3 ներկայացնում է Միությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

5.21.4 տալիս է լիազորագրեր,

5.21.5 բանկերում բացում է Միության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

5.21.6 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

5.21.7 հաստատում է Միության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

5.21.8 հաստատում է Միության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները.

5.21.9 հինգ տարին մեկ հաստատում է Միության , ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ նրա մարմինների հաշվետվությունները,

5.21.10 իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ,

5.21.11 իրականացնում է Միության համագումարի, Խորհրդի և նախագահության որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

5.22 Նախագահի բացակայության դեպքում նախագահի հրամանով նրա պարտականությունները կատարում է փոխնախագահներից մեկը:

5.23 Միության տնօրենը.

5.23.1 իր իրավասությունների սահմաններում առանց լիազորագրի ներկայացնում է Միությունը,

5.23.2 ապահովում է Միության նախնգահի, Միության Խորհրդի և նախագահության որոշումների կատարումը,

5.23.3 իրականացնում է Միության նախագահի հրամանները և հանձնարարականները,

5.23.4 իրականացնում է Միության ֆինանսատնտեսական գործառույթները, բանկերում բացում է Միության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

5.23.5 Միության նախագահի հետ համաձայնեցնելով ձևավորում է Միության աշխատակազմը,

5.23.6 իրականացնում է Միության աշխատակազմի ղեկավարությունը,

5.23.7 աշխատակազմի հաստիքային ու արտահաստիքային աշխատողներին տալիս է պարտադիր ցուցումներ, արձակում է հրամաններ, ընդունում և ազատում է աշխատանքից:

5.24 Միության վերստուգիչ հանձնաժողովը իրավասու է.

5.24.1 տարին մեկ անգամ անցկացնելու Միության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

5.24.2 ծանոթանալու Միության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել Միության մարմիններին,

5.24.3 պահանջելու և ստանալու Միության գործունեության վերաբերյալ տեղեկատվություններ,

5.24.4 իրականացնելու սույն կանոնադրությամբ և Միության համագումարի որոշումներից բխող այլ լիազորություններ,

5.25 Միության վերստուգիչ հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում է նրա անդամների առնվազն 1/2-ը: Հանձնաժողովի որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Միության վերստուգիչ հանձնաժողովը ստուգման արդյունքները ներկայացնում է Միության համագումարին և Միության Խորհրդին:

5.26 Միության վերստուգիչ հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կողմից: Նա մասնակցում է Միության Խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.27 Միության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները համագումարի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հետ մեկտեղ:

6. *ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ*

6.1 Միությունը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, արժեթղթեր, օրենքով չարգելված այլ գույք:

6.2 Միության սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, անդամավճարներից, դրամաշնորհներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից, իր սեփականությունը հանդիսացող գույքի իրացումից, վարկերից, նվիրատվություններից, կտակներից և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից:

6.3 Միությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.4 Միության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով Միությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Միության սեփականությունն է:

6.5 Միության հիմնադիրները և անդամները Միությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Միության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:

6.6 Միության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրներին և անդամներին:

6.7 Միության հաշվապահական հաշվառումը և վիճակագրությունը վարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Միության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է համագումարի որոշմամբ.

7.1.1 Միության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով,

7.1.2 Միությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ,

7.1.3 Միությունը կարող է միանալ այլ կազմակերպությանը,

7.1.4 Միությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների,

7.1.5 Միությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություններ,

7.1.6 Միությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

7.2 Միության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Միությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

7.3 Միությունը կարող է կամավոր լուծարվել համագումարի որոշմամբ:

7.4 Միության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

7.5 Միությունը լուծարվում է քաղաքացիական օրենսգրքով, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

7.6 Միությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱԳՄ կանոնադրության

ՀԱԳՄ խորհրդանիշ



ՀԱԳՄ դրոշ



05